

Ռ. Ս. ՂԱԶԱՐՑԱՆ

Լեզվական ազդեցությունը, որ առաջ է գալիս տարբեր ժողովուրդների փոխադարձ և երկարատև շփումների հետևանքով՝ պայմանավորված քաղաքական-տնտեսական, կրոնական և մշակութային գործոններով, սովորաբար դրսևորվում է բառային փոխառությունների միջոցով:

Հայոց լեզուն դարերի վեր ազգակից և ոչ ազգակից լեզուներից ընդունել է բառային բազմաթիվ փոխառություններ, որոնք հսկայական դեր են խաղացել հայերենի բառային կազմի համալրման և հարստացման գործում:

Միջին հայերենի բառապաշարը հին փոխառություններին զուգահեռ շարունակաբար համալրվել է փոխառյալ նոր բառերով ու տերմիններով, որոնց հիմնական աղբյուրներն են՝ արաբերենը, պարսկերենը, հունարենը, թուրքերենը, ֆրանսերենը, լատիներենը, վրացերենը և ասորերենը: Միջինհայերենյան փոխառությունների մեջ քանակական առումով նախ և առաջ աչքի են ընկնում արաբերեն բառերը, որոնցով պարզապես ողողված են գեղարվեստական և գիտական մի շարք ինքնուրույն և թարգմանական գործեր: Այնուհետև բավականին մեծ թիվ են կազմում պարսկերեն, հունարեն և թուրքերեն լեզուներից կատարված փոխառությունները, որոնց հաջորդում են լատիներեն, վրացերեն, ասորերեն և խիստ հազվադեպ երբայերեն բառերը: Միաժամանակ պետք է նշել եվրոպական լեզուներից, հատկապես ֆրանսերենից, մասամբ էլ իտալերենից փոխառված բառերը: Ինչպես կտեսնենք, միջին հայերենի փոխառությունների մեջ առանձին խումբ են կազմում լեհերեն բառերը:

Բացի բառային փոխառություններից, միջին հայերենում հանդիպում են օտար բառերի ու բառակապակցությունների պատճենումներ: Բառապատճենումները հիմնականում գործել են գիտական գրականության մեջ և զգալի դեր են խաղացել գիտության տարբեր բնագավառներին առնչվող նոր տերմինների ստեղծման գործում: Միջին հայերենում տարածված են հատկապես արաբերենի և հունարենի բառակազմական կաղապարների օրինակով կատարված բառապատճենումները:

Հայտնի է, որ փոխառությունների անցումը կատարվում է երկու ուղիով՝ բանավոր և գրավոր: Ըստ այդմ փոխառյալ բառերը լինում են՝ ժողովրդական և գրական, որոնք իրենց հերթին կարող են լինել անմիջական և միջնորդական, այսինքն՝ փոխատու լեզվից անցումը կատարվում է ուղղակիորեն կամ մի այլ լեզվի միջնորդությամբ: Անտարակույս, միջնադարում փոխառված բառերի մեծագույն մասը ժողովրդական փոխառություններ են: Այդ կարգի փոխառությունները միջին գրական հայերենի բառապաշարի մեջ մուտք են գործել ժամանակի ժողովրդախոսակցական լեզվից և տարբեր բարբառներից: Այստեղ հարկ է նշել, որ հաճախ ժողովրդական փոխառությունները դժվար է սահմանազատել գրականից՝ որոշելով, թե դրանցից որոնք են ժողովրդական

և որոնք գրական, այլ կերպ ասած՝ փոխառությունների անցումը ինչպե՞ս է կատարվել՝ խոսակցական ճանապարհով, թե՞ գրավոր:

Արդ, տարբեր լեզուներից փոխառված բառերի մեջ պետք է առանձնացնել կրկնակ փոխառությունները, որոնք բավական տարածված են միջին հայերենում: Բանն այն է, որ արդեն փոխառված բառը հետագայում կարող է նորից փոխառվել՝ առաջ բերելով տվյալ բառի կրկնակ ձևեր, որոնք հատուկ են լեզվի զարգացման այս կամ այն փուլին: Այսպես, հին հայերենում գործածական մի շարք փոխառյալ բառեր միջինհայերենյան շրջանում տարբեր ձևերով փոխառվել են կրկին անգամ, օրինակ՝ բորակ—պորայ<պրսկ. bora, գոհար—ճոհար||ճուհար||ճօհար||ջուհար||ջօհար<արաբ. jauhar, որիզ<հուն. oryza—ըռուզ<արաբ. aruz, փիղ—ֆիլ<պրսկ., արաբ. fil և այլն:

Բացի այդ, միևնույն բառը լեզվի զարգացման տվյալ փուլի որոշ ժամանակներում կարող է փոխառվել տարբեր լեզուներից կամ նույն լեզվից՝ կազմելով կրկնակներ, օրինակ՝ ժիպակ «սնդիկ»<արաբ. zibaq—ժիվայ<պրսկ. živa, շօշան<ասոր. šošan—սուսան<պրսկ. susan և այլն:

Ի վերջո, նախքան տարբեր լեզուներից փոխառված բառերի ընդհանուր քննությանն անցնելը, պետք է նշել, որ միջինհայերենյան շրջանում՝ հատկապես արաբերենից, պարսկերենից և թուրքերենից փոխառյալ բազմաթիվ բառեր ոչ միայն պապահանվել են ժամանակակից բարբառներում, այլև դրանց մի որոշ մասը մուտք է գործել գրական լեզվի մեջ՝ դառնալով նրա սեփականությունը: Եվ ավելին. բարբառներում լայն կիրառություն ունեցող շատ փոխառյալ բառեր, հակադրվելով իրենց գրական համարժեքներին, առ այսօր գործածական են և՛ խոսակցական լեզվում, և՛ գրականության մեջ:

1. Արաբական փոխառություններ

Հայ-արաբական հարաբերությունները, որ զարգացում են ապրել և՛ բուն Հայաստանում, և՛ նրա սահմաններից դուրս, ընդգրկում են երկու մեծ շրջան:

Առաջին շրջանը սկսվում է է դարի կեսերից և ավարտվում Թ դարի վերջերին, շուրջ երեք դար տևող մի ժամանակաշրջան, երբ հայ ժողովուրդը, գտնվելով արաբական խալիֆաթի տիրապետության տակ, հերոսական պայքար էր մղում Հայաստանում վերահաստատելու հայկական պետականությունը: Նշելի է, որ այս շրջանում արաբերենի ազդեցությունը հայերենի վրա խիստ աննշան է եղել: Արաբերենից կատարված մի շարք փոխառություններ, որոնք տեղ են գտել է—Ժ դարերի հայ մատենագրության տարբեր երկերում, ամենևին որակ չեն կազմում հայերենի բառապաշարի մեջ:

Հայ-արաբական հարաբերությունների երկրորդ շրջանը, որ սերտորեն առնչվում է հայ ժողովրդի պատմական կյանքում կատարված տնտեսական-քաղաքական լուրջ փոփոխությունների հետ, սկսվում է ԺԲ դարից և շարունակվում մինչև Ժ է դարը: Չնայած Հայաստանում վաղուց վերացել էր արաբական տիրապետությունը, սակայն այս շրջանում է, որ զգացվում է արաբերենի ուժեղ ազդեցությունը հայերենի վրա՝ պայմանավորված այն շափազանց մեծ թվով փոխառյալ բառերով, որոնք կազմում են միջին հայերենի փոխառությունների ճնշող մեծամասնությունը:

Արաբերենից կատարված փոխառությունները միջին հայերենի բառապաշարին են անցել բանավոր և գրավոր ուղիներով: Ըստ այդմ էլ արաբերեն փոխառյալ բառերը բաժանվում են երկու խմբի՝ ժողովրդական և գրական փոխառություններ:

Պետք է նկատել, որ արաբերենից փոխառված բառերի մեծագույն մասը

ժողովրդական փոխառություններ են, որոնք միջին գրական հայերենին են անցել ուղղակի ճանապարհով՝ ժողովրդախոսակցական լեզվից:

Ինչպես արդեն նշվել է, արաբերենից կատարված փոխառություններ, մինչև միջին հայերենի կազմավորումը, հազվադեպ են հանդիպում հայ մատենագրության մեջ: Այս հանգամանքը ամենևին չի նշանակում, թե հայ-արաբական հարաբերությունների առաջին շրջանում ժամանակի ժողովրդախոսակցական լեզվում կենսունակ չեն եղել արաբերեն բառերը: Եթե հաշվի առնենք այն պատմական իրողությունը, որ դեռևս արաբական տիրապետության շրջանում հայ ժողովուրդը բուն իսկ երկրում չփվում էր արաբ ցեղերի հետ, և Բագրատունիների թագավորության անկումից դեռ շատ առաջ Միջագետքում և Ասորիքում բնակություն հաստատած մեծ թվով հայեր մշտական շփման մեջ էին արաբների հետ, ապա պարզ կդառնա, որ ժամանակի ժողովրդախոսակցական լեզվի մեջ անխուսափելիորեն պետք է մուտք գործեին արաբերեն բառեր, որոնց մեծ մասը, պահպանելով կենսունակությունը, գործածական է եղել նաև միջին հայերենի խոսակցական տարբերակներում: Այդ են վկայում միջին հայերենից եկող այն բազմաթիվ արաբերեն ժողովրդական փոխառությունները, որոնք շարունակում են պահպանվել ժամանակակից տարբեր բարբառներում՝ հնչյունափոխական զանազան անցումներով: Բարբառներում գործածվող միջինհայերենյան արաբական փոխառություններից են՝ աղաթ, ազապ, ալամ, ախմախ, աճապ, ամալ, ամանաթ, ամարաթ, այիպ, արզադ, բազազ, բուխար, դալալ, դահ, դալի, դովլաթ, դուքան, եաղութ, եասիր, զալում, զաճ, զայթուն, զաֆրան, զուֆր, ըռահան, ըռզակ, թամամ, թընչիր, թտպիր, ժուլլ, լէզէթ, լոխմայ, խաթր, խալխ, խանշար, խապար, խաս, խասիաթ, խարճ, խէր, խումար, հալ, հալալ, հալպաթ, հախ, համամ, հայվան, հասապ, հասրաթ, հարամ, հարամի, հարաքաթ, հարիֆ, հաւայ, հաւաս, հաքիմ, հերիսայ, հուքմ, դալամ, դալատ, դալպ, դամազ, դանթար, դապուլ, դարիպ, դաֆաս, դումաշ, դուրբան, ճահիլ||ջահիլ, ճիտ, ճուղապ, մալ, մախմուր, մահալայ, մահրում, մայտան||մեյդան||մէյտան, մասխարայ, մթխալ, մշհամ, մուլք, մուննաթ, մուրատ||մուրազ, նալ, նաղաշ, նաղտ, նաշ, նաֆաս, շառ, շարապ, շարպաթ, պատինճան, պնդոխ, ջալատ, ջուպայ, սալայ, սախաթ, սահաթ, սայրան||սէյրան, սապուն, սիֆաթ, սլեհ, սուրաթ, սուֆրայ, տաբպայ, քապապ, քարամ, քիպրիթ, բուֆր, ֆալաք, ֆինջան, ֆլան||ֆուլան, ֆստուխ, ֆրտ||ֆարտ և այլն:

Արաբական ժողովրդական փոխառություններն այնքան գործուն են եղել ժամանակի ժողովրդախոսակցական լեզվում, որ շատ հաճախ հիմք են ծառայել հայերենի բառակազմական կաղապարներով նոր բառերի ստեղծման համար: Այսպես, օրինակ՝ ազապ—ազապութիւն, ամիրայ—ամիրայհակ, ամիրայութիւն, ամիրանալ, ամիրապետ, խարճ—խարճել, կապալ—կապալառու, կապալատու, կապլել, հասրաթ—հասրաթամահ, հասրաթամեռ, դարիպ—դարիպանալ, դարիպութիւն, դարիպուկ, մուլք—մլքաթուղթ, մլքատէր, մլքել, պախրա—պախրէմիս, պախրէջաւ, պախրու ագի, տամահ—տամահ անել՝ զալ, տամահիլ և այլն:

Արաբերենից փոխառված բառերի մի զգալի մասը գրական փոխառություններ են, որոնք, ընդհանրապես գործածական չլինելով բանավոր-խոսակցական լեզվում, միջին հայերենին են անցել գրավոր ճանապարհով՝ հատկապես արաբերենից կատարված բազմատեսակ թարգմանությունների միջոցով: Անժխտելի է, որ միջնադարում մեծ նվաճումների հասած արաբական գիտությունը՝ հարակից մի շարք ճյուղերով, նշանակալից դեր է խաղացել ժամանակի հայ գիտական մտքի զարգացման գործում: Առանձնապես որոշ գիտությունների՝ բժշկության, մաթեմատիկայի, աստղաբաշխության, ալքիմիայի

բնագավառներում ստեղծված արարելիքն երկերը ոչ միայն ուսումնասիրվում էին հայ գիտնականների կողմից, այլև տարբեր առիթներով թարգմանվում հայերեն: ԺԲ դարից սկսած՝ բուն Հայաստանում և հատկապես հայկական երկրկիսում հայ հեղինակների ինքնուրույն գործերի հետ միասին երևան են գալիս արարական գիտական գրականությունից կատարված մի շարք արժեքավոր թարգմանություններ, որոնց մեջ լայնորեն տեղ են գտնում գիտություն տարբեր բնագավառների՝ և առհասարակ մեծ թվով արաբերեն անվանումներ՝ բույսերի և կենդանիների անուններ, բժշկական-ղեղագործական, աստղագիտական, քիմիական, դուրդամստեսական, ձիագիտական տերմիններ:

Կարևոր է նշել, որ արարական գրական փոխառություններից շատերը, որոնք գործառության տարբեր ոլորտներում որևէ կարգի սահմանափակում չեն ունեցել, ժամանակն են ընթացում ստացել են լայն գործածականություն՝ տարածվելով նաև ժողովրդախոսակցական լեզվում, իսկ որոշ փոխառություններ, ձեռք չբերելով ընդհանուր կիրառական արժեք, իբրև նեղ մասնագիտական բառեր պահպանվել են միայն գրավոր աղբյուրներում:

Միջին հայերենով ավանդված մի խումբ արաբերեն բառեր, իբրև ժողովրդական կամ գրական փոխառություններ, գործածական են նաև արդի հայերենում, ինչպես՝ աբլիս՝ տրաս, ամիրա, ասպուր, արձվան, ափիոն՝ աֆիոն, բակլա, թաս, խիկար, խսիր, կապա, կապալ, կոդա, հավլա, հապուլաս, հաջի, հինա, դուրան, մարջան, մելիթ, մկրատ, մուլա, նախշ, նամուս, նունուֆար, շամամ, շուլ, պայաթար, սամում, սատապ, սետուկ (սնդուկ), սորնջան, սուլթան, տնազ, տնազ (տունազ), բլան՝ բաթան, քուտաթ և այլն:

Արդ, եթե հաշվի առնենք այն հատկամանքը, որ արաբերեն բազմաթիվ բառեր պարսկերենում ունեն համարժեքներ, որոնք միջին հայերենում չեն դրսևորվում տառադարձության տարբեր արտահայտություններով, ապա հաճախ հնարավոր չէ ճշգրիտ որոշել մի ամբողջ շարք բառերի փոխառության անմիջական աղբյուրը, այսինքն՝ տվյալ բառը ուղղակիորեն արաբերենի՞ց է փոխառված, թե՞ հայերենին է անցել պարսկերենի միջնորդությամբ:

Արաբական փոխառությունները, ընդգրկելով գործածական ընդարձակ ոլորտներ, կազմում են իմ ստալին բազմազան խմբեր, որոնցից վերլուծական նկարագրությամբ կներկայացնենք միայն բուսանուններն ու բժշկական բառ-տերմինները:

Բուսանունների խմբի մեջ մտնող բառերը ներկայացնում են արարական փոխառությունների մեծագույն մասը: Այդ փոխառություններից շատ ու շատ բառեր, գիտվելով իբրև ղեղաբույսեր, անհամեմատ լայն կիրառություն են ունեցել գործնական բժշկագիտության երկերում: Դեռևս Մխիթար Հերացին իր «Ջերմանց մխիթարութիւն» երկում օգտագործել է բազմաթիվ բուսանուններ, որոնց մեջ զգալի թիվ են կազմում արաբերենից կատարված փոխառությունները:

Պատկանելի թվով բույսերի անվանումներ է օգտագործել Ամիրզովլաթ Ամասիացին, որի «Անգիտաց անպէտ» և «Օգուտ բժշկութեան» մեծածավալ երկերը աչքի են ընկնում հատկապես արաբական բուսանունների առատությամբ: Նշված գործերում հեղինակը ոչ միայն արձանագրել է բառային բազմաթիվ փոխառություններ, այլև ներկայացրել է արաբերենից կատարված բավականին թվով բուսանունների պատճենումներ:

Բացի բուն արաբական փոխառություններից, մի շարք բուսանուններ, որոնք ունեն հունական, պարսկական և լատինական ծագում, միջին հայերենին են անցել արաբերենի միջնորդությամբ, ինչպես՝ ալասնի, ախիոս,

այսպիսով, աստախօտօս, բաբունաճ||պապունաճ, դարիկոն, շահմի հանդալ, պատրանճալուայ, պարդատ, սատայ, սպստան, փեննայ, փուփիէ||Ֆուֆալ, ֆստուխ, ֆութանաճ||ֆոտանջ և այլն:

Միջինհայերենյան շրջանում փոխառված արաբերեն բուսանունների մի զգալի մասը հարատևել է մինչև մեր օրերը՝ գործածություն գտնելով ոչ միայն գրական և գիտական երկերում, այլև արձանագրվելով տարբեր բնույթի բառարաններում: Մյուս կողմից՝ արաբերեն շատ բուսանուններ, իսկ բառակապակցական անվանումներն ընդհանրապես, ժամանակի ընթացքում լրիվ դուրս են մղվել գործածությունից՝ իրենց տեղը զիջելով հայերեն համարժեքներին: Սակայն արաբերեն բուսանուններից մի քանիսը, շունենալով առհասարակ հայերենում համապատասխան անվանումներ, վաղուց ի վեր արմատացել են լեզվի բառապաշարի մեջ: Այդ կարգի բառերից կարելի է նշել՝ հինա, բակլա, լուպիա (լոբի), հապալաս, շամամ, ուհան, հունապ (ունապ), կղմուխ, սատապ և այլն:

Բացի բուսանուններից, միջինհայերենյան գրավոր աղբյուրները վկայում են մի շարք պտուղների, սերմերի, որոշ բույսերի ծաղիկների, տերևների, արմատների անվանումներ, որոնք զլխավորապես գործածված են բժշկարաններում և ախրապատիններում:

Միջնադարյան հայ բժշկագիտական գրականության մեջ լայնորեն օգտագործված են հատկապես արաբերենից փոխառված բժշկական բառ-տերմիններ՝ կապված հիմնականում դանազան հիվանդությունների, մարմնի ախտահարվող մասերի, գեղամիջոցների անվանումների հետ: Արաբերեն բժշկական և գեղագիտական բառանուններ առավել կամ պակաս հաճախականությամբ գործածված են հայ բժշկագիտության ասպարեղում ստեղծված ինքնուրույն և թարգմանական բոլոր երկերում, որոնցից առանձնապես հայտնի են խոշոր բժշկապետներ Մուսթար Շերացու, Գրիգորիսի, Ամիրդովլաթ Ամասիացու երկասիրությունները, Ալեքսիանոսի ձեռագիր-բժշկարանը և Աբուսայիդի «Յաղագս կազմութեան մարդոյն» աշխատությունը:

Անասնաբուժության, հատկապես ձիաբուժության բնագավառում գործածվող մի շարք արաբերեն տերմիններ՝ կապված գրաստների հիվանդությունների ու վնասվածքների անվանումների հետ, վկայված են «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ» միջնադարյան բարձրարժեք երկում:

Նետաքրքիր է, որ հայ բժիշկները իրենց գործերը միշտ շարադրել են ժողովրդին հասկանալի լեզվով, դրանով իսկ հետևողականորեն ձգտել են օտար լեզուներից ըստ անհրաժեշտության փոխառված բժշկական տերմինները բացատրել հայերեն համապատասխան անվանումներով: Այսպես, օրինակ.

Ապա այս ջերմս յերևան գայ, զոր տանիկն դպլագմայ անուանէ, որ քարգմանի հանապազ և ի յար (ՄՀՋՄ, 107): Շաղիղայ որ է կէս զլխացաւութիւն (ԱԱՌԲ, 135):

Միաժամանակ նշենք հետևյալը. քանի որ միջին դարերում արաբերենը Արևելքի երկրներում դիտվում էր իբրև գիտական լեզու, ուստի բժշկարանների հեղինակները շատ հաճախ հայերեն անվանումների դիմաց բերում էին արաբերեն համապատասխան տերմինները: Այսպես՝ Ի հիւանդիին վերայ դեղնութիւն իջնու, որ անուանի աբաղան (<արաբ. abaḡān) (Գր., 213):

Պետք է նկատիլ, որ շնայած միջին հայերենում արաբերեն բժշկագիտական տերմինների քանակն անցնում է երկու հարյուրից, սակայն դրանցից միայն հատ ու կեստ բառեր են վերապրել ժամանակակից գրական հայերենում, ինչպես՝ հապ (հաբ), հոկնա (հոգնա), նուպա, շիպ (շիբ):

2. Պարսկական փոխառություններ

Պարսկերենի ազդեցությունը հայերենի վրա մերթ ուժեղ, մերթ թույլ դրուսկորումնհրով շարունակվել է միջին դարերի ուղ ընթացքում: Հնագույն ժամանակներից ի վեր պարսկերենի հետ հայերենի շփումը միշտ ուղեկցվել է բազմաթիվ նոր փոխառություններով, որոնց մի զգալի մասն իր ուրույն արտահայտությունն է գտել միջին դարական հայերենի բառապաշարի մեջ: Քանակական առումով արաբական փոխառություններից հետո միջին հայերենում աչքի են զարնում պարսկերենից փոխառված բառերը, որոնց հիմնական աղբյուրը նոր պարսկերենն է:

Միջին հայերենի՝ պարսկերենից փոխառված բառերի թիվը հասնում է հարյուրների, որոնց մեջ հանդիպում են այնպիսի բառաձևեր, որոնք գալիս են պահլավերենից և բացակայում են գրաբարի գրավոր հուշարձաններում: Պահլավերենից եկող բառերը, անշուշտ, հնուց ի վեր պահպանված լինելով հայերենի որոշ բարբառներում՝ բանավոր ճանապարհով ներթափանցել են միջին հայերենի մատենագրական աղբյուրների մեջ: Միջին հայերենով ավանդված պահլավական փոխառություններից են՝ անուշատը, արճիճ, բագուկ «ճակնդեղ», բրինձ, գոսակ «քարձ. կարճ», դարիճակ «կաղապար», դերձան, լեղակ, խարբանդակ «իշավար», խարպիզակ «սեխ», համշիրակ «հայրենակից, երկրացի. կաթնեղբայր «աննդակից», հարեան, հունար, ճատրակ, ճերմակ, մուշտակ, նշաստակ «ցորենի օսլա», շիրիկ «քնջութի յուղ՝ ձեթ», պիսակ, ջուխտ, սատակ «պարզ, մաքուր, անխառն», տաճիկնակ «մտրակ, խարազան», տորվանտակ «նորահաս միրգ», փաթերակ «փորձանք, աղետ, շարիք», քուռակ և այլն:

Բացի պահլավական փոխառություններից, միջին հայերենով վկայված մի քանի բառեր ծագումնաբանորեն կապվում են հին պարսկերենի հետ, ինչպես՝ մարգագ «հայկական տոմարի 11-րդ ամիսը», վզեան՝ վզեն «վնաս»:

Պարսկերենից փոխառված բառերի մեծ մասը, կենսունակ լինելով միջին հայերենի խոսակցական տարբերակներում, ժողովրդական փոխառություններ են, որոնք հատկապես լայն կիրառություն են ունեցել միջնադարյան հայ գեղարվեստական և բժշկական գրականության մեջ: Հակառակ պատկերն են ներկայացնում պատմագրական և կրոնական բովանդակություն ունեցող երկերը, որոնց պաշտոնական լեզուն լինելով գրաբարը, ընդհանրապես աչքի չեն ընկնում պարսկերենից կատարված նոր փոխառություններով:

Նշելի է, որ միջին հայերենով ավանդված պարսկական ծագում ունեցող զգալի թվով բառեր մինչև այժմ կենդանի են հայերենի թե՛ արևելյան և թե՛ արևմտյան բարբառներում: Այդ կարգի բառերից են՝ աշքարայ, արախճին, արաղ, արապայ, արմաղան, աւարայ, բաղար, բագրկան, բաղ, բաղշայ, դաստէ, դուշման, դրուստ, դօստ, եար, եօնճայ, գահլէ, գահր, գնճիլ, թաժայ, թամայ, թէգ, թիմար, թուռշի, թօնի, լակլակ, լաշ, լուլայ, խալի, խան, խիար, խոնշայ, խօշ, հաւան, մահանայ, մաթուլ, մուռտառ, նալբանդ, շաֆթալու, շիրայ, շիրին, շիւան, շորվայ՝ շուրվայ, շրէշ, ուսթայ՝ ուստայ, շանկալ, շարխ, շարտախ, շոպան, շուխայ, պօստան՝ բօստան, քահրայ, ջուալ՝ ջվալ, սարխօշ, սուրմայ, փահլաւան, փանճարայ՝ փանշարայ, փաշայ, փարայ, փարտայ, փէշայ, փէշքէշ, քալամ, քալփաթուն, քամար, քասայ, քարանսարայ, քիշմիշ, քիսէ, քունձ՝ քունջ, բօսա և այլն:

Միջին դարերում փոխառված մի ամբողջ շարք պարսկերեն բառեր առավել կամ պակաս հաճախակցորովում գործածվում են նաև ժամանակակից գրական հայերենում, ինչպես՝ աստառ, բարուճ, բահրա, բեկ, բրինձ, գազար, գավ, գիժ, գուրգ, դարդ, դճուլ, երիշտա, թալակ, թարխուն, թութակ, լաթ,

լախտ, լաշակ, լկամ, լղար, խաշխաշ, խոջա, խուրմա, կանկար, հիլ, մարխ, մզկիթ, նամազ, նարգիզ, նարինջ, նշտար, շալ, շահեն, շաղգամ, շարշի, ջան, ջուհակ, սազ, սինի, սիսամբար (սուսամբար), սոնիճ, սում խ, սպանխ, սպանզ, տոշակ (դոշակ), փալան, փաշա, փարշ, փեշ, փիլալ (փլալ), քաթան, քաշալ, քաֆուր (քափուր), քիշ, քոշ և այլն:

3. Թուրքական փոխառություններ

Միջին հայերենի դարգացման սկզբնական շրջանից թուրքական լեզվախմբին պատկանող բառեր ընդհանրապես վկայված չեն հայ մատենագրության մեջ: Միայն ԺԳ դարից սկսած՝ մատենագրական մի քանի գործերում սկզբնապես հանդիպող մոնղոլ-թաթարական փոխառություններին զուգընթաց միջին գրական հայերենի մեջ աստիճանաբար մուտք էին գործում թուրքերեն բառեր, որոնց թիվը գնալով՝ խիստ աճում էր: Հատկապես՝ ԺԴ—ԺԶ դարերի ընթացքում, երբ թուրք տ. րերը վերստին հզորանալով՝ հիմք են դնում Օսմանյան կայսրության, աննախընթաց աստիճանի է հասնում հայ-թուրքական լեզվական շփումը, որի արդյունքն են թուրքերենից փոխառված այն բազմ թիվ բառերը, որոնք տեղ են գտել միջին գրական հայերենի դարգացման երկրորդ շրջանի գրավոր հուշարձաններում: Կեն ավելին՝ միջինհայերենյան ուշ շրջանի գրալի թվով փոխառություններ, որոնք ծագումով հատկապես արաբերեն, պարսկերեն և հունարեն բառեր են, թուրքերենում ունենալով համապատասխան փոխառյալ զուգահեռ ձևեր, մեծ մասամբ հայերենին են անցել թուրքերենի միջնորդությամբ:

Պետք է նկատել, որ միջին հայերենում թուրքերենից որևէ գրական փոխառություն չի կատարվել: Թուրքական լեզվախմբի բառերն ամբողջությամբ ժողովրդական փոխառություններ են և գործածական են եղել խոսակցական լեզվում, որտեղից ուղղ կի ներթափանցել են միջին գրական հայերենի տարբերակների մեջ:

Ինչպես արդեն նշել ենք, միջին գրական լեզվի դարգացման առաջին շրջանում՝ հուկազան ԺԳ—ԺԴ դարերում, թուրքական լեզուներից կատարված փոխառությունները մեծ թիվ չեն կազմում: Դրանք հիմնականում թաթարերեն, մոնղոլերեն և շաղաթայերեն բառեր են, որոնց համարժեքները մեծ մասամբ առկա են: Թուրքերենում և պարսկերենում, ուստի չի բացառվում, որ այդ բառերի մի մասը լինեն միջնորդությամբ փոխառություններ: Միջին դարերում հայերենի՝ թուրքական լեզուների հետ ունեցած պատմական շունչակցության հարցի կարևորությունից ելնելով՝ ավելորդ չենք համարում ստորև ներկայացնելու թաթարերենից, մոնղոլերենից և շաղաթայերենից փոխառված բառերի ամբողջական ցանկը:

Արաբակ||արաբէկ||արապէկ «տիտղոս, որ շնորհվել է սելջուկյան ամիրայութունների կառավարչներին և զորահրամանատարներին» <չաղաթ., թուրք., ասախ||յասախ «օրենք» <թթր., արապան «մեծ թմբուկ» <թթր., արդուլի «դատավոր» <թթր., արևայուն «բրիտանյա» <մոնղ., բալիշ «դրամական միավոր» <մոնղ., բաւալ «ըմբիշ» <թթր., բիլիբի «գրագիր» <թթր., ելազ «գետնամորի» <թթր., թալան «կողոպուտ, ավարառություն» <թթր., թաղար «1. կավե գոգավոր աման. 2. հարկ, տուրք» <չաղաթ., բանկայ «արծաթե դրամ» <չաղաթ., իամ «իջևանի պահապան, իջևանատեր» <թթր., խաթուն «կին, տիկին, տիրուհի» <թթր., խալան «տուրքի տեսակ» <թթր., խափշուր||ղիփշուր «ոչխարի հարկ» <թթր., խիպիլիկ||խիպլիկ «մղձավանջ» <թթր., խրմուզ «ծիու կաթով ըմպելիք» <չաղաթ., խուռութայ||խուռութայ «համաժողով» <թթր., դայան «միապետ» <թթր., ճիմ «գուլձ» <չաղաթ., թուրք., նոք «ծայր,

եզր, սահման» <թթր., մանդիլայ «առաջապահ մարտական ջոկատի գլուխը» <մոնղ., մուչալիլայ «փոխադարձ գրավոր համաձայնություն» <մոնղ., ճոյին «իշխան. զորապետ» <մոնղ., պրսկ., շինֆսան «իշխանաց իշխան, զորապետ, կուսակալ» <մոնղ., շում «հոնի» <թթր., պոխտախաուր «պոխտախ կրող» <թթր., սղամիշ «իշխանական պարզատրություն» <թթր., տառուղայ «ոստիկանապետ» <չաղաթ., պրսկ., տոպրակ «պարկ, մախաղ» <թթր., Բալամաչի «թարգման, թարգմանող» <թթր., Բեսիկթոյլի Բեսիֆթան «գինված դոնապան» <թթր., Բեշիկ «պահակ» <թթր.:

Ի վերջո նշենք, որ միջինհայերենյան շրջանում թուրքերենից փոխառված բավականին թվով բառեր մինչև այժմ էլ շարունակում են գործածվել հայերենի տարբեր բարբառներում: Այդ բառերից մի քանիսը, կենսունակ լինելով ժողովրդախոսակցական լեզվում, իբրև ներքին փոխառություններ, անմիջականորեն մուտք են գործել ժամանակակից գրական հայերենի բառապաշարի մեջ, ինչպես՝ ալոճ, բեկ, բեղ, բիզ, դիք, ելակ, թալան, թաղար, խավիար, կոպտոն, ճիմ, ճոթ, չոփ, սուս, տոպրակ, փախլավա, բութեշ:

4. Հունական փոխառություններ

Միջին դարերում հունարեն լեզվից հայերենին են անցել մեծ թվով բառեր, չնայած այս շրջանում համեմատաբար թույլ է եղել հունարենի ազդեցությունը հայերենի վրա, որ պայմանավորված էր հայ ժողովրդի պատմական կյանքում տեղի ունեցող հասարակական-քաղաքական լուրջ տեղաշարժերով: Հատկապես հունական գիտության և մշակույթի շարունակվող ազդեցությունն է հիմք ծառայել զգալի թվով փոխառությունների համար, որոնք տեղ են գտել միջնադարյան մատենագրության տարբեր բնույթի գործերում: Հունարենից միջին հայերենին անցած բառերի գերակշռող մասն ակնհայտ գրական փոխառություններ են՝ կառված հիմնականում գիտական, կրոնական և մշակութային բնագավառների հետ: Այդ ոլորտներին պատկանող բառերը, շունենալով գործառական լայն շրջանակներ, սովորաբար եզակի կիրառությամբ հանդիպում են միայն այս կամ այն հեղինակի երկում: Առանձին դեպքերում, եթե նկատի առնենք փոխառյալ բառերի հունարեն և լատիներեն համապատասխան զուգահեռ ձևերի առկայությունը, չի բացառվում տվյալ գրական փոխառության անմիջական աղբյուրի լատինական լինելը:

Հունարեն փոխառյալ մի շարք բառեր, որոնք համեմատաբար աչքի են ընկնում գործածության հոճախականությամբ և մեծ մասամբ առնչվում են առօրյա կյանքին ու կենցաղին, ամենայն հավանականությամբ միջին գրական հայերենի մեջ մուտք են գործել ուղղակի ճանադարձով, այն է՝ ժողովրդախոսակցական լեզվից:

Ակներև է, որ միջնադարում հունարենը հայերենի ընդհանուր բառապաշարի հարստացման գործում էական դեր չի խաղացել, քանի որ միջին հայերենում գործածական հունարեն փոխառյալ բառերի մեծագույն մասը, որպես օտարաբանություն, չմերվելով գրական լեզվի բառապաշարին, ժամանակի ընթացքում լրիվ դուրս մղվեց գործածությունից:

5. Լատինական փոխառություններ

Հայերենում լատինական փոխառություններն ընդհանրապես կրել են մատենագրական բնույթ: Բնորոշ չլինելով ժողովրդախոսակցական լեզվին՝ լատինական բուն փոխառությունները ոչ մի կերպ չեն մերվել միջին հայերենի

բառապաշարին և ժամանակի ընթացքում առհասարակ դուրս են մղվել գործածությունից՝ դառնալով լրիվ անգործածական բառեր:

Հատինական ծագում ունեցող այն բառերը, որոնք այս կամ այն շահով գործածական են եղել ժամանակի ժողովրդախոսակցական լեզվում, պետք է համարել միջնորդավորված փոխառություններ, որոնց անմիջական և հիմնական աղբյուրը հունարենն, ֆրանսերեն և իտալերեն լեզուներն են:

Միջին հայերենի մատենագրական աղբյուրներում տեղ գտած լատինական փոխառությունները հիմնականում կրոնական եզրերի, իրավունքի, պետական-հասարակական կյանքի, պաշտոնավարության և կենցաղի բնագավառներին պատկանող բառեր են:

6. Ֆրանսիական և իտալական փոխառություններ

Հայ-ֆրանսիական հարաբերությունները սկիզբ են առել բուն երկրից դուրս՝ Կիլիկիայում, որտեղ Բագրատունիների թագավորության անկումից հետո ստեղծվել էր հայկական ինքնուրույն պետություն, որի պաշտոնական լեզուն դարձել էր կիլիկյան հայերենը: Կիլիկիայում հայկական պետականության վերականգնումը, բնականաբար, առաջ էր բերել հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքում նոր փոփոխություններ, որոնք նախ և առաջ ընթացք էին ստանում Կիլիկիայի և եվրոպական պետությունների միջև հաստատված սոցիալ-տնտեսական, կրոնաքաղաքական, առևտրական և մշակութային բազմաբնույթ կապերի պայմաններում: Կիլիկիայի հայ իրականության մեջ հատկապես մեծ է եղել ֆրանս-հայկական լեզվական շփումը, որը զգալի թիվ կազմող բառային փոխառություններով իր նկատելի կնիքն է դրել միջին հայերենի բառապաշարի վրա: Ֆրանսերեն բառերը, անտարակույս, խիստ դործածական են եղել կիլիկյան հայերենում, որոնցից մի քանիսը, ստանալով լայն տարածում, հիմնականում գրական ճանապարհով մուտք են գործել բուն Հայաստանում գրված մատենագրական որոշ երկերի մեջ:

Ֆրանսերեն փոխառությունների ճնշող մեծամասնությունը հիմնականում կատարվել է ԺԲ—ԺԴ դարերի ընթացքում, երբ հայ-ֆրանսիական հարաբերությունները սպորում էին բուռն զարգացում: Այդ ենթաշրջանը մոտավորապես համընկնում է հին ֆրանսերենի ժամանակաշրջանին (Թ—ԺԴ դդ.): Հետևաբար ֆրանսերենից կատարված փոխառությունների մեջ առանձնանում են հատկապես այն բառամիավորները, որոնց անմիջական աղբյուրը հին ֆրանսերենն է: Ֆրանսերենից կատարված փոխառությունները գերադանցապես պետական կյանքի, պաշտոնավարության, դատավարության, իրավունքի, կրոնի, առևտրի և կենցաղի հետ կապված անվանումներ են:

Միջնադարյան ֆրանսերեն փոխառություններից շատերը, ունենալով հայերեն համարժեքներ, չպահպանեցին ընդհանրապես իրենց գործառական արժեքը և, չմերվելով հայերենի բառապաշարին, դուրս մղվեցին հետագա գործածությունից: Միայն որոշ բառեր նույնությամբ կամ նշյունական մասնակի ձևափոխությամբ շարունակում են դործածվել մինչև այժմ, ինչպես՝ պարոն, բարոն, պրինց, մարկիզ, դուքս:

Ֆրանսերեն փոխառությունների համեմատությամբ փոքր թիվ են կազմում իտալերեն բառերը, որոնք ցաքուցրիվ հանդիպում են մինչադարյան մի քանի գրական հուշարձաններում՝ հիմնականում պատկանելով պաշտոնավարության, կրոնի, առևտրի և կենցաղի ոլորտներին: Դրանք են՝ զուղոստապլ|| զուղոստապլ «սպարապետ, սվազ իշխան», դուկատ «ոսկե դրամի միավոր», դուն «դոժ, դուքս», լեկ «ձուլվածք» (մետաղի), լեկեքա «ավանդազրույց»,

մառչիլ «եվրոպական արծաթ դրամ», ցիմնդիր «գերեզմանատեղի, գերեզմանատուն», ֆրա «հոգևոր եղբայր»:

7. Լեհական փոխառություններ

Եվրոպական փոխառությունների մեջ ուրույն տեղ են գրավում լեհերենից փոխառված բառերը, որոնք գերազանցապես մեզ են հասել լեհահայերի առօրյա խոսակցական լեզվով դրի առնված դատական մեծաքանակ արձանագրությունների շնորհիվ¹: Գրավոր այդ հուշարձանների բառամթերքի անքակտելի մասն են կազմում վաղուց ի վեր նստվածք տված արաբերեն, պարսկերեն և թուրքերեն փոխառությունները, որոնց զուգահեռ գործածվել են բազմաթիվ լեհերեն բառեր, որոնք, խիստ կենսունակ լինելով լեհահայոց խոսակցական լեզվում, ուղղակիորեն մուտք են գործել դատական նիստերի արձանագրությունների մատյանների մեջ:

Նկատի պետք է ունենալ, որ լեհական փոխառությունները համեմատաբար ավելի ուշ շրջանի արդյունք են և կրել են տեղայնացված բնույթ՝ ունենալով տարածքային ընդգրկմամբ գործածության նեղ շրջանակներ: Հետևաբար պատահական չէ, որ լեհերենից փոխառված բառեր հազվադեպ են հանդիպում միջնադարյան հայ մատենագրության գործերում: Փոխառյալ այդ բառերը, սահմանազատվելով միջինհայերենյան բուն փոխառություններից, մտնում են միջին գրական լեզվի բառապաշարի այն շերտի մեջ, որ կարելի է անվանել չեզոք²:

Հայերենի՝ լեհերենից կատարված փոխառությունները բավականին մեծ թիվ են կազմում և ընդհանրապես առօրյա գործածության բառեր են, որոնց մեջ, բնականաբար, առանձին խումբ են կազմում օրենքի հետ կապված մի շարք բառեր ու բառակապակցություններ: Լեհական փոխառություններից են՝ արէլացիա «վճռաբեկ գանգատ», արեսդ «կալանք», բան «պարոն», բալիֆա «մեղավիժակ», բէլջայ «տակառ», զագնայ «բանտ», ետումարֆ «տոնավաճառ», զրօնֆա «ճարմանդ», ինվէնդար «գույք», լանցուխ «շղթա», հրոշ «դրամական միավոր. գրոշ», մինուրայ «դատավճռի պատճեն», ուպրուս «սփռոց», սդադուդ «կանոնադրություն», սդրդայ «բարդ, դեզ», սուվայ «գումար», վոյթ «գավառապետ», տապչան «որմնաթախտ, թախտ. անկողին», տովոտ «ապացույց, փաստարկ», փիսուր «գրագիր», ֆամէն «կշռաքար», ֆուխնայ «խոհանոց», ֆուրմա «կաղապար», ֆուրման «կառապան. սալլապան» և այլն:

8. Վրացական փոխառություններ

Հայերի և վրացիների դարավոր հարևանությունը, քաղաքական և մշակութային սերտ հարաբերությունների մեջ գտնվելը բնականաբար հիմք պետք է ծառայեր բազմաթիվ փոխառությունների համար, որ տարբեր ժամանակներում երկու ժողովուրդները փոխադարձաբար կնքել են միմյանցից: Ապացուցված է, որ այդ փոխառությունների մեջ անհամեմատ մեծ թիվ են կազմում այն բառերը, որոնց անմիջական կամ միջնորդավորված աղբյուրը հայերենն է:

Վրացական ծագում ունեցող փոխառյալ բառերն ավանդված են թե՛ մի-

¹ Տե՛ս Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները (18-րդ դ.), Երևան, 1963:

² Ի դեպ, միջին հայերենի բառապաշարի ուսումնասիրության տարբեր հարցերով զբաղվողները սովորաբար զանց են առել միջինհայերենյան շրջանում լեհերենից փոխառված բառերի քննության խնդիրը:

շին հայերենով և թե՛ զրար: րով զրված միջնադարյան բազմաբնույթ երկերում, վիմագիր արձանագրություններում և հիշատակարաններում, վրացերենից թարգմանված հայերեն մի քանի գործերում: Միաժամանակ նշենք, որ վրացերենից փոխառված մի շարք բառեր արձանագրված են Երեմիա Մեղրեցու բառարանում («Բառգիրք հայոց», Ալիկոնայ, 1698, Երևան, 1975):

Պետք է նկատել, որ միջին դարերում հայերենի՝ վրացերենից կատարված փոխառությունները երբեմն ակնհայտ դուրաճեմունք ունեն կովկասյան այլ լեզուներում, ուստի փոխառությունների շարքում որոշ բառերի անմիջական աղբյուրը կարող են լինել իբրև: -կովկասյան լեզվ: ընտանիքի մեջ մտնող առանձին լեզուներ:

Վրացերենից հայերենին անցած փոխառությունները հիմնականում առօրյա կյանքին վերաբերող բառեր են, որոնցից շատերը վաղուց ի վեր գործածական են եղել ժողովրդավտասկեցական լեզվում և տարրեր բարբառներում: Միջին հայերենում վրացերենից փոխառված բառերից են՝ բաղակ կամ բանդակ «պտուղների հյուսի՝ եփելով եռացրած. մաթ», զմիր «ուժեղ, զորեղ, խիզախ, կտրիճ», դեղայ «մայր», թոկ, լոքի, խատ «կարող, նախշ», խարբ «անհագ», խիզան «ընտանիք, դերդ ստան», խորբալ «ցորեն», ծէս, կիտր «վարունգ», կոտոշ, կուծառի «երկրակ», նաղ, նիլ, մանդիկ «խորջին. մախաղ, տոպրակ», շեք «խենթ, հիմար, անխելք», շոատ «պանրի շիճուկ», շրիկ «սուրհանդակ», շէշ «շանշ» (ձիթապտղի են), շիտ «ծիտ, ճնճուկ», ֆշիլ «ծանրր խոսքերով հանդիմանել, սաստել», ֆոփ «քարայր, քարանձավ» և այլն:

Վրացերեն մի քանի բառեր, որոնք հատկապես պետական կյանքի, պաշտոնավարության, կրոնի հետ կապված անվանումներ են, պետք է համարել գրական փոխառություններ՝ վկայված գլխավորապես Ստեփանոս Օքթեյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկում: Այդ բառերն են՝ դէղէպոզ «վրաց աղնվական», դպէլ «իշխանական տիրոջ», երիսրավ «զորագլուխ, հրամանատար», ծիկնոպար «դիվանագիր, քարտուղադ», ծինամ ծղօր «վանահայր», նղօնդիտէլ «ճղոնդիդեցի» (ճղոնդիդի վանքի արքեպիսկոպոսը), մամբավար «հայրապետ, քահանայապետ», մանդատորբախուցէս «մարզպան, կուսակալ», մամբերիզ «մարտիկ, ռազմիկ»:

Վրացերենից փոխառված բառերի հիմնական մասը, ունենալով ընդհանուր կիրառական արժեք, ակնհայտորեն ժողովրդական փոխառություններ են, որոնցից մի քանիսը խոսակցական լեզվի միջոցով մուտք են գործել ժամանակակից հայերենի բառապաշարի մեջ, ինչպես՝ աբեթ, թոկ, ծես, ճաղ, ճիլ:

9. Ասորական փոխառություններ

7

Միջնադարում այլևս չի զգացվում այն ազդեցությունը, որ ունեցել էր ասորերենը հայերենի վրա դեռևս Ե դարից առաջ: Միջին հայերենում, ի տարբերություն գրաբարի, մեծ թիվ չեն կազմում ասորական փոխառությունները, որոնք, սահմանափակվելով իմաստային նեղ խմբերի մեջ, հիմնականում առօրյա գործածության բառեր են:

Նկատի ունենալով, որ դարեր ի վեր պատմական Հայաստանի տարածքում բնակվել են ասորիներ, որոնք հասարակական-տնտեսական սերտ հարաբերություններ են ունեցել հայերի հետ, ասորական բառերի մեծագույն մասը պետք է համարել անմիջական փոխառություններ, իսկ առանձին բառեր լեզվի մեջ մուտք են գործել ասորերենից հայերեն թարգմանված մի քանի երկերի միջոցով: Հայերենի դարգացման միջին շրջանից կատարված ասորական փոխառություններն են՝ բուտ «հոգևոր տեսուչ՝ վերակացու», գուռն «փայտե աման կամ տաշտ՝ խմոր լցնելու համար. բարե փոքր ավազան», գուրպայ

10. Երբայական փոխառություններ

Միջին հայերենում խիստ սահմանափակ թիվ են կազմում երբայական փոխառությունները: Երբայական ծագում ունեցող մի քանի բառեր, որոնք վկայված են միջնադարյան գրական աղբյուրներում և Երեմիա Մեղրեցու բառարանում, միջին գրական լեզվի մեջ մուտք են գործել գրավոր և բանավոր ուղիներով, հիմնականում առանձին լեզուների՝ հատկապես հունարենի միջնորդությամբ: Միջին հայերենի գրավոր հուշարձաններում հանդիպող երբայական փոխառություններն են՝ զիու «հին երբայական ամսանուն», քամուզ (բար.) «կուժկոտրուկ», բուայլլրուէ «օրենք, կանոն, սովորույթ», կեփազ «զուտ՝ մաքուր ոսկի», մեհրշուան «երբայական յոթերորդ ամիսը», շամիբա «ալմաստ, ադամանդ», րաւիմ «սուրհանդակ», սիւան «հին երբայական երրորդ ամսվա անունը», տրէր «երբայական տասներորդ ամիսը»:

Р. С. КАЗАРЯН — **Займствования в среднеармянском литературном языке.** — Словарный запас среднеармянского наряду со старыми заимствованиями пополнялся новыми словами и терминами, основными источниками которых были арабский, персидский, греческий, французский, турецкий, латинский, грузинский и сирийский. В количественном отношении здесь преобладают арабские лексемы, охватывающие широкую функциональную сферу и составляющие разнообразные смысловые группы. Затем довольно весомый пласт составляют заимствования из персидского, греческого и турецкого языков, редко — из еврейского. Впервые здесь предметом исследования становятся заимствования из польского, которые составляют отдельную группу в среднеармянском. Многочисленные лексические заимствования, в частности из арабского, персидского и турецкого, сохранились в современных диалектах, некоторая их часть даже проникла в литературный язык, более того, многие заимствования, употребляемые в диалектах, соперничают с их литературными эквивалентами и до сих пор функционируют и в разговорном языке, и в литературе.